




ՏԱԲՈԼՈՎ Պ.

ՊԱՀՊԱՆԵՑԵՔ  
ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ  
ԶԻՈՒՆ

636  
Տ-12

12 AUG 2013

21.579

24 SEP 2010

SUFNOLQ 01

# ՊԱՀՊԱՆԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՁԻՈՒՆ

**ՊԱՅԲԱՐԵԼ ԱՌՈՂՋ ՁԻՈՒ ՀԱՄԱՐ,  
ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ՊԱՅԲԱՐԵԼ ՀԱՋՈՂ ՑԱՆԲՍԻ ՀԱՄԱՐ**

ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարությանը, Կուսակցության և համաշխարհային պրոլետարիատի սիրելի առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ յերկրային կուսկազմակերպչությունը հսկայական հաջողություններ է գրգռում: Համատարած կոլեկտիվացման հիման վրա, կուլակությունը վերացված է հիմնականում, վորպես դասակարգ:

Կոմունիստական կուսակցությունը, անշեղորեն անցկացնելով յերկրի ինչուստրացման գիծը, պայմաններ ստեղծեց գյուղացիության հիմնական աշխատավոր մասսաներին դեպի սոցիալիստական զարգացման ուղին դարձնելու համար:

Գյուղատնտեսության զարգացման կոլտնտեսային ձևվր վերջնականապես ամրապնդվել է: Դրա միջոցով գյուղում ստեղծվել են բոլոր պայմանները գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության ուժեղ վերելքի և կոլտնտեսականների նյութական-կուլտուրական բարելավման համար: Ստեղծված են բոլոր պայմանները ամենաբարձր գյուղատնտեսական մեքենաների (տրակտորներ, կոմբայներ, և այլն) համար:

3472  
111

Հյուսիսային Կովկասում տարեց-տարի գյուղատնտեսությունն ավելի ու ավելի շատ ճյուղեր յենթարկվում են մեքենայացման:

Հյուսիսային Կովկասի դաշտերում 1933 թվի գարնանն աշխատելու յեն ավելի քան 20 հազար տրակտորներ, ուրիշ խոսքով, ցանքսերի տարածության ավելի, քան 40<sup>0</sup>/0-ը մշակվելու յե տրակտորներով:

Յեթե նկատի առնենք տրակտորային պարկի վերջին յերեք տարիների ընթացքում ունեցած աճը, ապա մենք կտեսնենք յերկրամասի տրակտորիզացիայի յենթարկվելու արագ և ուժեղ թափը

|               |         |         |       |            |
|---------------|---------|---------|-------|------------|
| Առ 1-ն ապրիլի | 1930 թ. | կային   | 9,174 | տրակտորներ |
| »             | »       | 1931 թ. | »     | 12,370     |
| »             | »       | 1932 թ. | »     | 15,748     |

Մենք ստեղծեցինք նոր ուժեղ տրակտորային արդյունաբերություն (Ստալինգրադ, Խարկով, Չելյաբինսկ) և հնարավորություն ունենք ավելի արագ կերպով տրակտորիզացիայի յենթարկելու գյուղատնտեսությունը:

Դրա հետ կապված հարց ե ծագում, թե ինչո՞ւն ե կայանալու ձիու դերը ներկայումս և ապագայում: Խնչպիսի խնդիրներ պիտի դրվեն կոլտնտեսությունների առաջ ընդհանրապես և կոլտնտեսականների առաջ մասնավորապես՝ ձիու պահպանության և վերատադրության վերաբերյալ:

Կոլտնտեսային կյանքին մոտիկ կանգնած աշխատողի, իսկ մասնավոր, կոլտնտեսականի համար այդ հարցերի պատասխանն այլ կերպ չի կարող լինել, վոր ձիերի պահպանության և բարելավման համար մղվող պայքարը—դա պայքար ե գարնանացանի ծրարագրի հաջող կատարման և կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար:

Վորպեսզի ցույց տանք, թե ինչպիսի կարեվորագույն նշանակություն ունի ձին կոլտնտեսային շինարարության մեջ, դիմենք թվական տվյալներին:

Ընթացիկ տարվա գարնան 8 միլիոն 521 հազար հեկտար ընդհանուր ցանքատարածություններից, կենդանի քարշող ուժին ընկնում ե ավելի, քան 4 միլիոն հեկտար, վորը կազմում ե յուրաքանչյուր քարշող միավորի համար 7,1 հեկտար ծանրաբեռնում:

Ի՞նչ են ցույց տալիս այս թվերը: Սյն, վոր ձին 1933 թվի գարնանը կարեվորագույն դեր ե խաղալու ցանքաի կամպանիայի հաջող անցկացման գործում:

Իսկ յուրաքանչյուր կոլտնտեսական պետք ե հասկանա, վոր հաջող ցանքսը—խոշորագույն հաղթանակ ե սոցիալիստական շինարարության մեջ և դրանով մեծ չափով տնտեսապես և կազմակերպչորեն ամրապնդվում են կոլտնտեսությունները:

Կուսակցությունն ու կառավարությունը Հյուսիսային Կովկասի առաջ դրել են մարտական խնդիր՝ ժամանակին վարել և ցանել 2 միլիոն 850 հազար հեկտար, անել այնպես, վոր վոչ մի հեկտար պտղաբեր հող չմնա առանց ցանելու: Հիմնականում գարնանացանը լուծվելու յե յերեք ցուցանիշների՝ սերմի, լավ տրակտորի և առողջ ձիու միջոցով և, վերջապես, կոլտնտեսություններում բարձր աշխատանքային կարգապահությամբ:

«Յերկրորդ պատգամի—սերմերի պատրաստման» համար պայքար կազմակերպելիս, պետք ե միաժամանակ նաև պայքարը կազմակերպել ուժեղ ձիու համար: Կոլտնտեսային ուժեղ ձիու համար պայքար մղելու գործում հետ մնալը կարող ե վիժեցնել գարնանացանի կամպանիան:

Մենք մատնանշեցինք միայն ցանքսը: Պետք ե խոսել նաև գյուղատնտեսական ուրիշ աշխատանքների:

րի մասին — տափանում, քաղհան, բերքահավաք, հունձ  
և գյուղատնտեսական աշխատանքների մի շարք այլ  
ոժանդակ պրոցեսներ:

Իսկ Հյուսիսային Կովկասում դեռ ինչքան անկ-  
յուններ կան, չխոսելով նույնիսկ ինքնավար մարզե-  
րի շեռնային ռայոնների մասին, ուր ձին դեռ ևս  
միակ քարշող ուժն է հանդիսանում: Իսկ այն դաշ-  
տերում, ուր աշխատելու յե տրակտորը, միլիոն ձին  
ավելորդ է: Վոչ մի դեպքում: Ընդհակառակը, ձին  
վորպես տրակտորին լրացնող կարենվորագույն ուժ,  
անհրաժեշտ է:

Մենք ունենք տրակտորներ՝ կոտրվելու մասսա-  
յական դեպքեր, տրակտորների ժամանակից առաջ  
փչացում միայն այն պատճառով, վոր տրակտորը  
բարբարոսաբար ոգտագործվում է այնպիսի աշ-  
խատանքներում, ուր կարելի չեր ոգտագործել  
ձիուն:

Հաճախ տրակտորներով կրում են ջուր, փոխադ-  
րում են վառելանյութ և այլն: Հաճախ տրակտորն  
ոգտագործվում է այնպիսի տեղերում, վորոնք բոլո-  
րովին ձեռնաու և անհարմար են տրակտորների ոգ-  
տագործման համար: Հաճախակի պտույտներ տալը,  
կանգառումները, մի տեղից մյուս տեղը տրակտորի  
փոխադրությունը նրանից մեծ են երգիւս յե խլում  
և փստներ հասցնում նրան: Այդպիսի փոքրիկ հողա-  
մասեր վարելը և անվար մնացած կտորների վարը  
կարելի չե կատարել ձիու ուժով: Այսպիսով տրակ-  
տոր լինելու դեպքում ձին վոչ միայն ավելորդ չե,  
այլ ընդհակառակը, լրացնում է տրակտորի աշխա-  
տանքը և պայմաններ ստեղծում տրակտորի ավելի  
և ավելի նպատակահարմար ոգտագործման հա-  
մար:

«Համագումարը նախադրուշացնում է Խորհրդա-  
յին Սոցիալիստական Հանրապետությունների

Միության գյուղական տնտեսության աշխատող-  
ներին ձիու, վորպես քարշող ուժի թերագնա-  
հատման դեմ:

«Խորհրդային Սոց. Հանր. Միությանն անհրա-  
ժեշտ հացի, հումքի և կերային մշակույթների  
պահանջներին բավարարություն կարելի չե տալ  
այն դեպքում, յեթե տրակտորի հետ միասին պահ-  
պանվի և ձիու քարշող ուժը, ինչպես դաշտերի  
մշակման, այնպես ել ապրանքների փոխադրման  
համար և ավելի լավ ոգտագործվի, քան անհա-  
տական տնտեսություններում: Ձիու քարշող ուժի  
վատնումը Խորհուրդների Համագումարը համա-  
րում է, վորպես կուլակային ազդեցության ար-  
տահայտություն և առաջարկում է Խորհրդային  
Իշխանության բոլոր մարմիններին այդ արտա-  
հայտության դեմ վճռական պայքար մղել» (Միու-  
թյան Խորհուրդների 6-րդ Համագումարի վորո-  
շումներից):

Չնայած դրան, մի շարք տեղերում վայրենի վե-  
քաբերմունք է տեղի ունենում դեպի ձին: Ձիու պահ-  
պանությունը հանձնված է ինքնահոսի: Թույլ է տրը-  
ված այստրվա կոլտնտեսականի գերազնահատում:  
Համարում են, վոր յեթե գյուղացին անցել է կոլ-  
տնտեսության մեջ, ապա նա արդեն դարձել է սո-  
ցիալիստական սեփականության — ձիու պաշտպան:  
Ղեկավարներից շատերը մոռանում են, վոր գյուղա-  
ցու կոլտնտեսության մեջ մտնելուց՝ մինչև նրան  
խսկական կոլտնտեսական դաստիարակելը — դա «մեծ  
չափի զինտանցիւս յե» և դեռ համառ մասսայական  
աշխատանք է պետք, վորպեսզի յերեկվա մենատն-  
տեսից ստացվի իսկական կոլեկտիվ աշխատող:

«Մենք ուրախանում ենք, վոր տնտեսության  
կոլտնտեսային ձեվը դարձել է տիրող ձև հացա-  
հատիկային ռայոններում: Սակայն վոչ բոլորն են

հասկանում ան, վոր այդ հանգամանքը չի պակասեցնում, այլ ավելացնում է մեր հոգաւարութիւնն ու պատասխանատւութիւնը գյուղատնտեսութեան զարգացման գործում: Շատերը կարծում են, վոր յետեւ այս կամ այն ուայոններում, այս կամ այն մարդում ձեռք է բերված 70 կամ 80 տոկոս կոլեկտիւացում, ապա զբաղւում ամեն բան արված է և մենք կարող ենք գործը թողնել ինքնահոսի, յենթադրելով, վոր կոլեկտիւացումը ինքը կանի իր գործը, ինքը կբարձրացնի գյուղատնտեսութիւնը: Բայց դա մեծ սխալ է, ընկերներ: Իրականում կոլտնտեսութիւնը վորպէս տնտեսութեան գերակշռող ձևի անցնելը վոչ թէ պակասեցնում, այլ ավելացնում է մեր հոգաւարութիւնը գյուղատնտեսութեան մասին, չի պակասեցնում, այլ ավելացնում է գյուղատնտեսութեան բարձրացման գործում կոմունիստների ղեկավարող դերը: Ինքնահոսն այժմ գյուղատնտեսութեան զարգացման գործի համար շատ ավելի վտանգավոր է, քան յերբեկցել: Ինքնահոսն այժմ կարող է խորտակել ամբողջ գործը:

Մինչև վոր գյուղում գերակշռում եր մենատնտեսականը, կուտակցութիւնը կարող եր սահմանափակել իր միջամտութիւնը գյուղատնտեսութեան զարգացման գործում միայն ոգնութեան առանձին ակտերով, խորհուրդներով կամ նախազգուշացումներով: Այն ժամանակ մենատնտեսականն ինքը պետք է հոգ տաներ իր տնտեսութեան մասին, վորովհետեւ նա վոչ վորքի վրա չեր կարող պատասխանատւութիւն դնել այն տնտեսութեան համար, վորն իր անհատական տնտեսութիւնն եր և բացի իրենից, վոչ վորքի վրա հույս չեր կարող դնել: Այն ժամանակ մենատնտեսականն ինքը պետք է հոգ տաներ ցանի, բերքահա-

վաքի և, առհասարակ, գյուղատնտեսական աշխատանքի բոլոր պրոցեսների մասին, յետեւ նա չեր ուզում մնալ առանց հացի և սովամահ լինելու: Կոլեկտիւ տնտեսութիւն անցնելուց հետո, գործն եյապէս փոխվեց: Կոլտնտեսութիւնն անհատական տնտեսութիւն չէ: Կոլտնտեսականն այդպէս ել ասում է այժմ. «Կոլտնտեսութիւնը իմն է և իմը չէ. նա իմն է, բայց միաժամանակ և ի վանինն է, և Ֆիլիպինն է և Միքայելինն է և կոլտնտեսութեան մյուս անդամներինն է, կոլտնտեսութիւնն ընդհանուրինն է»: Այժմ նա, յերեկվա մենատնտեսականը և այսօրվա կոլեկտիւիստը, կոլտնտեսական է, այժմ նա կարող է կոլտնտեսութեան մյուս անդամների վրա ձգել պատասխանատւութիւնը և նրանց վրա հույս ունենալ, գիտենալով վոր կոլտնտեսութիւնը նրան առանց հացի չի թողնի: Այդ պատճառով նրա, կոլտնտեսականի հոգսերը պակասեցին, քան այն ժամանակ, յերբ նա ուներ իր անհատական տնտեսութիւնը, վորովհետեւ տնտեսութեան հոգսերն ու պատասխանատւութիւնն այժմ դասավորված են բոլոր կոլտնտեսականների միջև:

Ի՞նչ ենք զբաղւում յեզրակացնում: Յեզրակացնում ենք այն, վոր այժմ տնտեսութիւն վարելու պատասխանատւութեան ծանրութեան կենտրոնը առանձին կոլտնտեսականներից անցել է կոլտնտեսութեան ղեկավարութեանը, կոլտնտեսութեան ղեկավար կորիզին: Այժմ գյուղացիները պահանջում են իրենք իրենցից հոգ տանել տնտեսութեան մասին և գործը խելացի կերպով տանել: Ավելի ճիշտ, վոչ այնքան իրենցից, վորքան կոլտնտեսութեան ղեկավարութիւնից: Իսկ ի՞նչ է նշանակում դա: Դա նշանակում է, վոր կուտակցութիւնն այժմ չի կարող սահմանափակվել

գլուղատնտեսութեան զարգացման պրոցեսներին խառնվելու առանձին ակտերով:

Նա պետք է այժմ իր ձեռքն առնի կոլտնտեսութեանների ղեկավարութիւնը, իր վրա վերցնի աշխատանքի պատասխանատվութիւնը և ոգնի կոլտնտեսականներին առաջ տանելու իրենց տնտեսութիւնը զիտութեան և տեխնիկայի տվյալների հիման վրա:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Կոլտնտեսութիւնը խոշոր տնտեսութիւն է: Սակայն հարցութեամբ, իսկ յերեքեմն նույնիսկ հազարավոր ծխեր ընդգրկող խոշոր տնտեսութիւնը հողագործութեան մեջ կարող է տարվել միայն պլանային ղեկավարութեան կարգով: Առանց դրան նա պետք է քայքայվի և կործանվի: Ահա կոլտնտեսային կառուցվածք լինելու դեպքում մի նոր պայման ևս, վորն արմատապես տարբերվում է անհատական մանր տնտեսութիւն վարելու պայմաններից: Կարելի չէ արդյոք այդպիսի տնտեսութեան վարումը թողնել, այսպես կոչվող, իրերի բնական ընթացքին—ինքնահոսին: Պարզ է, վոր վոչ: Այդ պիսի տնտեսութիւն վարելու համար, պետք է կոլտնտեսութիւնն ապահովել տնտեսութիւնը պլանավորելու և նրան կազմակերպելու ընդունակ տարրական-գորգետ մարդկանց միմիմումով, վորն առանց խորհրդային իշխանութեան կողմից սիստեմատիկաբար խառնվելուն կոլտնտեսային շինարարութեան գործին, առանց նրա սիստեմատիկաբար ոգնութեան, այդպիսի տնտեսութիւնը կարգավորել անհնարին է:

Իսկ ի՞նչ է բղխում դրանից: Այն, վոր կոլտնտեսային կառուցվածքը վոչ թե պակասեցնում, այլ տվելացնում է կուսակցութեան և կառավարութեան հոգատարութիւնը գլուղատնտեսութեան

զարգացման մասին: Իրանից բղխում է, վոր կուսակցութիւնը, յեթե նա ուզում է ղեկավարել կոլտնտեսային շարժումը, պետք է մանի կոլտնտեսային կյանքի և ղեկավարութեան բոլոր մանրամասնութիւնների մեջ: Իրանից բղխում է, վոր կուսակցութիւնը վոչ թե պիտի թուլացնի, այլ ուժեղացնի իր կապը կոլտնտեսութիւնների հետ, վոր նա պիտի զիտենա ամբողջ արտադրութիւնը կոլտնտեսութիւններում, վորպեսզի իր ժամանակին ոգնութեան հասնի և կանխի կոլտնտեսութիւններին սպառնացող վտանգները» (Ստալին—Գյուղի աշխատանքի մասին):

Այս հանգամանքը կոլտնտեսութեան ղեկավարութեան առաջ ուղղակի դնում է կոլտնտեսային կյանքի բոլոր կողմերին, և, առաջին հերթին, ձիու պահպանութեան գործին ուշադրութիւն դարձնելու անմիջական խնդիրը: Պետք է հասկանալ, վոր ձիու պահպանութիւնը ձեռք չի բերվում միայն ընդհանուր ցուցմունքներով: Ձիու ոգտագործումը պետք է վորոշված լինի ճշտութեամբ: Կազմակերպելով ձիու ոգտագործումն աշխատանքներում, չի կարելի մոռացութեան տալ ձիերի բազմացման արտադրական միջոցառումների մասին: Ժողկոմխորհն ու Կենտկոմը իրենց ս. թ. փետրվարի 10 ի վորոշման մեջ այդ առթիվ հաստատ կերպով արձանագրեցին.

«Բոլոր ծնու ձիերին, ծնելուց յերկու ամիս առաջ ազատել աշխատանքից և ծնելուց հետո աշխատեցնել վոչ վաղ, քան մի ամսից հետո»... և հետո—«վորովհետեւ զուգավորման կամպանիան զուգադիպում է դարնանացանի ժամանակին, ապա ձիերի բազմացման նպատակով, պարտավորեցնել կոլտնտեսութիւնների բրիգադներին և նախագահներին ու խորհրտնտեսութիւնների ղեկավարներին, իր ժամանակին զուգավորել բազմա-

նալու ընդունակ բոլոր մատակ ձիերին: Զուգա-  
վորման կամպանիայի փաստացի անցկացման վե-  
րահսկողությունն ու ստուգումը ղրվում է կուս-  
կազմակերպության և գյուղխորհուրդների վրա»: Այստեղից յերևում է, թե ինչպիսի մեծ նշա-  
նակություն են տալիս կուսակցությունն ու կառա-  
վարությունը ձիու կյանքի և աճման տարբեր ժա-  
մանակաշրջաններին:

Ձիերի բազմացման գործի ճիշտ կազմակերպումը  
հնարավորություն է տալիս կոլտնտեսության՝ իր  
ժամանակին ցանելու, իր ժամանակին բերքը հավա-  
քելու, իր ժամանակին հացահատիկը պետություն  
հանձնելու և դրանով ամրապնդելու կոլտնտեսային  
տնտեսությունը և բարձրացնելու կոլտնտեսական-  
ների նյութական բարեկեցությունը:

Նախնական նշումներով—յերկրորդ հնգամյակի  
վերջում, կենդանի քարշող ուժը բռնելու յե դաշտա-  
յին աշխատանքներում՝ վար, ցան, բերքահավաք—  
մինչև 25 տոկոս: Իսկ յեթե հաշվի առնենք, վոր  
յերկրորդ հնգամյակի վերջում կմեծանա նաև տրանս-  
պորտի պահանջը, ապա պարզ կլինի, վոր ձիու նշա-  
նակությունը կոլտնտեսային կյանքում վոչ մի դեպ-  
քում չի պակասում: Ձին կոլտնտեսությունների ամ-  
բապնդման գործում պետք է խաղա մեծ դեր:

Այդպիսով, յուրաքանչյուր կոմունիստ և կոմյե-  
րիտական, բրիգադիր և կոլտնտեսական պետք է յու-  
րացնեն, վոր ցանի խնդիրը լուծելիս, ձիու հարցը  
պետք է ղրվի արժանի տնտեսական-քաղաքական  
բարձրության վրա, վորովհետեւ առանց ուժեղ և  
առողջ կոլտնտեսային ձիու, չի կարելի հաջողությամբ  
ավարտել գարնանացանը:

Ձիու հարցը անքակտելի կերպով կապված է  
կոլտնտեսությունների հետագա կազմակերպչական-  
տնտեսական ամրապնդման աշխատանքի հետ:

## ԿՈՆՑՆՏԵՍԱՅԻՆ ՁԻՆ ՊԵՏԳ Ե ԳՏՆՎԻ ՎՍՏԱՅԵԼԻ ՁԵՌԲԵՐՈՒՄ

Դասակարգային թշնամին սոցիալիզմի կառուց-  
ման տվյալ եռապոլմ գործում է այլ կերպով, քան  
մեկ կամ յերկու տարի առաջ: Մահադող պարագի-  
տային դասակարգերի թափթփուկները վոչ միայն  
ձեափոխել են իրենց գործողությունների տակտիկան,  
այլ և փոխվել են իրենց արտաքին ձևով:

«Փնտռում են դասակարգային թշնամուն կոլ-  
տնտեսությունից դուրս, յերևակայելով նրան գա-  
զանի դեմքով, մեծ ատամներով, հաստ վզով և  
սրբի պատկերը ձեռքին մարդկանց կերպարան-  
քով: Կուլակին փնտռում են այն կերպարանքով,  
ինչպիսին մենք տեսնում ենք պակասների վրա:  
Իայց այդպիսի կուլակներ վաղուց արդեն գոյու-  
թյուն չունեն: Գյուղում գտնվող այժմյան կու-  
լակներն ու յենթակուլակներն, այժմյան հակա-  
խորհրդային տարրերը—դա, մեծ մասամբ, «հան-  
գիստ», «քաղցր», համարյա «սուրբ» մարդիկ են:  
Դրանց չպետք է փնտռել կոլտնտեսությունից  
հեռու, նրանք նստած են հենց կոլտնտեսության  
մեջ և վարում այնտեղ պահեստապետների, տըն-  
տեսների, հաշվարարների, քարտուղարների և այլ  
պաշտոններ: Նրանք յերբեք չեն ասի—«կորչեն  
կոլտնտեսությունները»: Նրանք կոլտնտեսու-  
թյունների «կողմնակից» են: Նրանք կոլտնտեսու-  
թյուններում այնպիսի սաբոտաժային և վնա-  
սարար աշխատանք են տանում, վոր կոլտնտե-  
սությունները դրանցից մեծամեծ վնասներ են  
կրում: Նրանք յերբեք չեն ասի—«կորչեն հացա-  
մթերումները». նրանք հացամթերումների «կողմ-  
նակից» են: Նրանք «միայն» քարոզի յեն դուրս  
գալիս և պահանջում, վոր կոլտնտեսությունը

կազմակերպի անասնաբուծության համար այնպիսի ֆոնդ, վորն յերեք անգամ ավելի յե, քան այն, վոր պահանջվում է գործի համար. վորպէսզի կոլտնտեսությունը կազմակերպի ապահովագրման ֆոնդ, վորն յերեք անգամ ավելի յե, քան վոր պահանջվում է գործի համար. վոր կոլտնտեսությունը հասարակական սննդի համար բաց թողնի որական 6-ից մինչև 10 ֆունտ հաց յուրաքանչյուր աշխատողին և այլն: Պարզ է, վոր այդպիսի «ֆոնդերից» և հասարակական սննդի համար հաց բաց թողնելուց և այդպիսի ստոր քարոզներից հետո կոլտնտեսության տնտեսական կարողությունը պիտի քայքայվի և հացամթերումների համար վոչինչ չմնա:

Այդպիսի ճարպիկ թշնամուն ճանաչելու և նրա քարոզների ազդեցության տակ չընկնելու համար, պետք է ունենալ հեղափոխական զգոնություն, ոժտված լինել թշնամուն դիմակադերձ անելու ընդունակությամբ և ցույց տալ կոլտնտեսականների նրա իսկական հակահեղափոխական դեմքը: Սակայն շատ է արդյոք գյուղում այդպիսի հատկություններով ոժտված կոմունիստների թիվը: Կոմունիստները հաճախ վոչ միայն չեն մերկացնում այդպիսի դասակարգային թշնամիներին, այլ, ընդհակառակը, իրենք են յենթարկվում նրանց խարդախ քարոզներին և գնում նրանց հետևից» (Ստալին—Դյուղի աշխատանքի մասին):

Կուլակային տարրերին գյուղում հաջողվել է մշտնել կոլտնտեսությունները և լինելով կոլտնտեսային գործունեություն վճռական ճյուղերում, կազմակերպել և հացամթերումների, ցանի, բերքահավաքի, սերմ ամբարելու և այլն սարսռաժ:

Դասակարգային թշնամու փաստարարության առարկաներից մեկն է և կոլտնտեսային ձին. Կուլա-

կուլթյան մնացորդները զիտեն, վոր ձին վճռում էր կարևորագույն տնտեսական քաղաքական կամպանիաները և ապահովում կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրապնդումը: Նրանց համար պարզ է, վոր կոլտնտեսային շինարարության աճը, դա միաժամանակ և սոցիալիզմի կառուցման աճն է և պարագլխային դասակարգերի մահը:

Այդ պատճառով դասակարգային թշնամին դիմում է ամեն միջոցների, վորպեսզի կարողանա շարունակելու իր գոյությունը, վորպէսզի ձգձգի սոցիալիզմի կառուցումը և դրանով կարողանա ողտազործել իր ուժերն ու մեր պակասությունները յերկրում կապիտալիզմի վերահաստատման համար:

Մենք գործ ունենք կուլակների վերջին դասակարգի հետ գյուղում, իսկ դա ամենավտանգավոր և կենսունակ դասակարգն է:

«Կուլակներն ամենազազանային, ամենակոպիտ, ամենավայրենի շահագործողներն են, վորոնք բազմիցս ուրիշ յերկրների պատմության մեջ վերահաստատել են կալվածատերերի, ցարի, տերտերների, կապիտալիստների շխանությունը»... (ԼԵՆԻՆ):

Դասակարգային թշնամին կատաղի պայքար է մղում գյուղում կոլտնտեսային շինարարության դեմ: Կուլակային թափթփուկները՝ վնասարարներն ու հակահեղափոխական տարրերն իրենց թշնամական ուժերն ուղղում են կոլտնտեսային շինարարության կարևորագույն մասերից մեկի—կոլտնտեսային ձիու դեմ:

Այստեղից կոլտնտեսության կազմակերպությունների և ղեկավարների առաջ մեծ խնդիր է ծառանում հանձնել ձին հուսալի և ստուգված կոլտնտեսականներին:

«Ձիերին կարգին պահելու, կենդանի քարշող ուժի խայտառակ վատնումի, խնամքի և կերա-

կրելու կազմակերպման հարցերը—դա նույնպես դասակարգային պայքարի հարցեր են, վորովհետև պարզ է, վոր հատկապես հենց դրանով է դասակարգային թշնամին փորձում վիժեցնելու ցանի պատրաստությունն ու անցկացումը» (Յերկրկումի Յերկրային Վերահսկիչ Հանձնաժողովի պլենումում ընկ. Շեբուդայեվի 1933 թ. հունվարի 26-ի զեկուցումից)։

Այսպիսով, կոլտնտեսային ձևում ողների կազմերի ընտրության հարցը մեծ քաղաքական հարց է։ Պետք է կարողանալ բռնել դասակարգային թշնամուն, բռնել նրան հանցանքի մեջ կոլտնտեսային գոմում, արմատահան անել նրան։ Փաղաքականապես դասակարգային զգոնություն ունենալու դեպքում, դժվար չէ ճանաչել ձիու շուրջն ու նրա կողքին գործ տեսնող թշնամուն։ Չկա այնպիսի ստորություն, այնպիսի խորամանկություն, վորին չզիմեր այժմ դասակարգային թշնամին՝ գարնանացանի կամ պանիայի բուլշևիկյան պատրաստությունը վիժեցնելու համար։

Յուրաքանչյուր գյուղացի գիտե, թե ինչքան հեշտ է ձիուն ֆլասել։ Բավական է միայն քրտնած ձիուն չօածկել և թողնել բացողյա, կամ պաղ գոմում, և նա շարքից դուրս կընկնի։ Բավական է կերի մեջ խառնել ալախու մանրուցք, և ձին կմահանա։ Ջրեցիք ձիուն նրա տաքացած ժամանակ, կամ թե վազելու ժամանակ չթողիր, վոր իր ժամանակին միզի,—այդ դեպքում ել ձին կմահանա։

Մի խոսքով, դասակարգային թշնամին կողտագործի ամեն ինչ, կոլտնտեսային ձիու վերաբերմամբ ֆլասարարական գործողությունների համար։ Ուստի, ամենից նպատակահարմար է ձին ամրացնել հավատարիս, փորձված կոլտնտեսականիս։ Հարկավոր է վճռականապես անշեղ կիրառել կուսակցության ու

կառավարության վորոշումը ձիու պահպանության մասին։—

«Կենտկումը նախազգուշացնում է, վոր դեպի ձին վայրենի և անփուլթ վերաբերմունքը, վորի պատճառով ձիերի մասսայական կոտորած է տեղի ունենում, կհամարվի վորպես հանցագործություն ժողովրդական տնտեսության շահերի դեմ և կպատժվի որենքի ամբողջ խստությամբ» (ՀԿ (բ) Կենտկումի 1932 թվի մայիսի 27-ի վորոշումը)։

Դժբախտաբար այս վորոշումը, վորն ուղղված է դասակարգային թշնամու, ֆլասարարների, ծուլերի դեմ, բավականաչափ չի գործադրվել կոլտնտեսություններում։ Բացի ֆլասարարությունից, ուրիշ ել ինչով կարելի չէ բացատրել այն դրությունը, վորը գոյություն ունի առանձին ուայոններում։ Նեվինսումինսկի ուայոնում կա ընդամենը 5829 լծկան ձի, վորոնցից քայքայված են 4573-ը, կամ 75 տոկոսը։ Տիմաշևսկի ուայոն—լծկան ձիեր 6689, վորոնցից քայքայված են 4579-ը, կամ 68 տոկոսը։ Կորենովսկի ուայոն—11053 լծկար ձի, վորոնցից քայքայված են 6153-ը, կամ 60 տոկոսը։ Դյորգիևսկի ուայոն—9221 լծկան ձի, վորոնցից քայքայված են 6702-ը, կամ 73 տոկոսը։

Կուլակության մնացորդները, ոգտվելով շատ կոլտնտեսությունների ղեկավարների դասակարգային կուրությամբ, մինչև այժմ անպատիժ կերպով իրենց գործն են տեսնում կոլտնտեսությունների ախոռներում, տանջում են ձիերին, մատակ ձիերին աշխատեցնում են ուժից վեր, գիշակեր կերպով են ոգտագործում կերը և այլն։ Չկան այնպիսի միջոցներ, վոր կուլակը չողտագործի կոլտնտեսային ձիու դեմ։ ԽՍՀՄ Կենտգործկումի յերրորդ նստաշրջանում արած իր ղեկուցման մեջ, Հոդժողկոմ ընկ. Յակովլևը որինակներ եր բերում այն մասին, թե ինչպես դասակար-

գային թշնամին վրդովեցուցիչ վերաբերմունք ե ցույց տալիս դեպի ձին. ընկ. Յակովլեն ասում եր.

«Հյուսիսային Կովկասի կոլտնտեսություններից մեկում, վարելու ժամանակ լծկանն այլանդակ դրու-  
թյան մեջ եր պահվում: Ձիերին դիտամար հանձ-  
նեցին ջահել տղաների, վորոնք նրանց չեյին ա-  
րածացնում ու ջրում, առանց լծասարքը հանելու  
թողնում էյին տափաստան: Վատ կերակրած, քրտ-  
նած ձիերին գազանաբար ծեծում էյին յեղան-  
ներով և այլ գործիքներով: Ձիապան Ուլյանկոն ձի-  
յերի համար որական ստանում եր 7 կիլոգրամ ալյուր,  
վորպեսզի այդ ալյուրը որական յերեք անգամ խառ-  
ներ ձիերին տրվող հարդին: Սակայն նա ձիերին մի-  
այն հարդով եր կերակրում: Հետևանքն այն յեղավ,  
վոր տասնյակ ձիեր քայքայվեցին ու կոտորվեցին»:

Քանի-քանի այդպիսի դեպքեր են հայտարերվել  
Հյուսիսային Կովկասում: Բացի բացարձակ փասա-  
րարությունից, ուրիշ ել ինչ անուն կարելի յե տալ  
դասակարգային թշնամու այսպիսի արարքներին:

Կրապոտկինի ռայոնի Տեմբեկսկայա ստանիցայի  
«Պուտ կ սոցիալիզմում» կոլտնտեսության մեջ 101  
ձիերից 86-ը կոտորվեցին այն պատճառով, վոր նրանց  
վատ վորակի, փչացած սիլոսով էյին կերակրում:  
Սեդիգեյի ինքնավար մարզի Աստիկալսկի գյուղի տը-  
հրդի «Մարտուկայ» կոլտնտեսության մեջ, 4-րդ բրի-  
գադում 1932 թվի հեկտեմբերի 1-ին կար 53 ձի, մինչև  
33 թվի հունվարի 1-ը 48-ը կոտորվեցին, շնորհիվ  
դեպի ձին յեղած անտնտեսավարի և բացարձակապես  
փասարարական վերաբերմունքի:

Հաշվի առնելով այն վճռական դերը, վոր ունեն  
ձիապանները լծկան ձիերի պահպանության գործում,  
բոլոր մեքենա-տրակտորային կայաններին և տեղա-  
կան կազմակերպություններին տրված ե հետևյալ դի-  
րեկտիվ.—

«Պարտավորեցնել ՄՏԿ-ներին (և մանավանդ  
քաղաքայիններին, վորոնք արդեն կազմակերպված  
են) և տեղական կուսակազմակերպություններին՝ սիս-  
տեմատիկաբար ստուգել այն աշխատողներին, վո-  
րոնք կապված են լծկանի խնամքի հետ: Վտարել  
և առանց ներողամտության պատժել թե ուղղակի  
փասարարություն անողներին և թե գործին ան-  
փուլթ վերաբերվողներին (մինչև կոլտնտեսություն-  
նից հեռացնելը, ագարակամերձ հողից զրկելը, իսկ  
առանձին դեպքում—մինչև յերկրամասի սահման-  
ներից աքսորելը): Անպետք աշխատողներին փո-  
խարինել լավագույն, ակտիվիստ կոլտնտեսական-  
ներով, վորոնք հացամթերումների ժամանակաշը-  
ջանում ստուգված են կոլտնտեսությունների հա-  
մար մղված պայքարում» (Յերկրգործկոմի և Յեր-  
կրկոմի 1933 թ. հունվարի 20-ի վորոշումից):  
Նույնպիսի նպատակ ե հետապնդում ՀԿ(բ)Կ  
Յերկրկոմի Յերկր. ՎՀ միացյալ պլենումի այս տար-  
վա հունվարի 26-ի վորոշումը.—

«Պարտավորեցնել Յերկրգործկոմին հրատարակել  
պարտադիր վորոշում ձիու անկման և տրակտորի  
չարամիտ ջարդելու յուրաքանչյուր դեպքի դա-  
տական քննության մասին, մեղավորների վերա-  
բերմամբ կիրառելով հասարակական սեփականու-  
թյան պահպանման վերաբերյալ դեկրետը»:

Յեղնելով այս դիրեկտիվից, Յերկրային Գործա-  
դիր Կոմիտեն 1933 թվի հունվարի 29-ին վորոշեց—

«Հաշվի առնելով այն վճռական նշանակությունը,  
վոր ունի տրակտորների և կենդանի քարշող ուժի  
դրությունը առաջիկա դարնանացանի պլանների  
կատարման և յերկրամասի ամբողջ ժողովրդա-  
կան տնտեսության համար, աչքի առաջ ունենա-  
լով թե այն բացահայտ փասարարության փա-  
տերը, վորոնք եղի յեն ունենում խորհրտա-  
տեղի»:

սությունները, ՄՏԿ-ներն ու կոլտնտեսությունները խցկված կուլակների և այլ դասակարգայնորեն թշնամի տարրերի կողմից՝ տրակտորների ու լծկանի վերաբերմամբ և թե սրանց հանցավոր ու անտնտեսավարի ոգտագործման ու խնամքի փաստերը, Հյուսիսային Կովկասի Յերկրագործկումբ վորոշում ե—

1) Պարտավորեցնել յերկրամասի բոլոր գործադիր կոմիտեներին ու խորհրդներին՝ հեղափոխական ամբողջ խստությամբ, միլիցիայի որդանների միջոցով, անհապաղ և ամենամանրակրկիտ քննության յենթարկել յուրաքանչյուր լծկան անասունի անկման ամեն մի դեպք, ինչպես և յուրաքանչյուր տրակտորի փչացումն ու ջարդվածքը:

2) Յուրաքանչյուր այգալիսի դեպք քննել միանգամայն հերթից դուրս, ցուցադրական դատի կարգով, անմիջապես կոլտնտեսություններում, մեքենա-տրակտորային կայաններում ու խորհտնտեսություններում, բանվորների և կոլտնտեսականների լայն մասսաների ներկայությամբ: Մեղավորներին յենթարկել ամենախիստ դատական պատասխանատվության, ինչպես հասարակական (սոցիալիստական) սեփականության հափշտակիչների և ժողովրդի թշնամիներին, համաձայն կառավարության 1932 թվականի ոգտտոսի 7-ի դեկրետի):

3) Առաջարկել Յերկրային դատախազության, Յերկրային դատարանին և միլիցիայի Յերկրային Վարչության՝ անհապաղ կերպով իրենց գծով տեղերին տալ ցուցմունքներ, վորոնք ապահովում են ներկա վորոշման կատարումը:

Այսպիսով, կարողանալ նշոնակել այնպիսի մարդկանց, իսկապես բարեխիղճ կոլտնտեսականների, վորոնք կարող են ապահովել կոլտնտեսային ձիու լավ

խնամքը, — նշանակում ե պահպանել ու բարելավել ձին, նշանակում ե հաջողությամբ կատարել գարնանացանի կամպանիան: Կոլտնտեսային ղեկավարության և ձիուն անմիջապես խնամողների աշխատանքի վորակի մասին կարելի յե դատել ըստ այն դրության, վորի մեջ գտնվում են բոլոր ձիերը:

Հարկավոր ե վճռականապես և անխնայորեն կիրառել կոռակցության ու կառավարության վորոշումը ձիու պահպանության մասին, մերկացնել և կոտնտեսային ախոռներից վռնդել կուլակային վասարական տարրերին, վորոնք ստուգված են կուլակի դեմ և կոլտնտեսության համար մղված պայքարում:

## ԴԻՄԱՋՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԿՈՆՏՆՏԵՍԱՅԻՆ ՁԻՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ՄԻՋՈՑՆ Ե

Ձիու խնամքի գործում դիմադրկությունը նրա չար թշնամին ե: Կուլակի, սպիտակ-զվարդիականի և այլ վասատունների բոլոր խարդախությունները կարող են բողարկված մնալ, շնորհիվ դիմադրկության գոյության: Դիմադրկության դեպքում իրենց նպատակին չեն հասնի թե կերը, թե խնամքը և թե ձիու վերաբերյալ այլ հոգատարությունները: Դիմադրկությունն անտանելի յե ձիու համար: Ձին լավ դրության մեջ պահելու համար վորոշ, պատասխանատու մարդ ե հարկավոր:

Հոգատար խնամքն ու ամենորյա ուշադրությունը դեպի ձին՝ խոշոր չափով անզգալի յեն դարձնում շենքի բացակայությունը և կերի սղությունը (պակասությունը):

Ձե՝ վոր յուրաքանչյուր գյուղացի, յերբ ուներ իր անձնական, սեփական ձին, հրաշալի կերպով մաքրում եր նրան, իր ժամանակին ջրում եր, վրան բան եր գցում վատ յեղանակին, լողացնում եր և

այլն և այլն: Մենատնտես գյուղացին շատ լավ գիտեր, վոր հարկավոր է պարբերաբար մաքրել ձիու բերանը, կեր տալիս՝ հանում էր սանձը, ինչպես և ջրելիս:

Այժմ կարծես թե նա մոռացել է այդ բոլորը և նրան պետք է սովորեցնել: Ընկ. Մոլոտովը ԽՍՀՄ Կենտգործկոմի յերրորդ նստաշրջանում արած իր զեկուցման մեջ բավական սուր և ճիշտ բնորոշեց կոլտնտեսականի վերաբերմունքը դեպի կոլտնտեսություն գույքը:—

«Պետք է հաշվի առնել այն եյական հանգամանքը, վոր մենատնտեսից կոլտնտեսություն անցած ձիուն մի քանի կոլտնտեսականներ այլևս չեն համարում իրենցը. գյուղացի կոլտնտեսականը միշտ չի հասկանում, վոր կոլտնտեսություն (վորտեղ նա աշխատում է) հասարակական սեփականությունը միևնույն ժամանակ իր բարիքն է, վորովհետև նա այդ հասարակական, կոլտնտեսային կազմակերպության անդամն է: Մանր սեփականատիրոջ հոգեբանությունը խիստ բացասական ազդեցություն ունեցավ կոլտնտեսային շինարարության առաջին շրջանի վրա, և հենց ձիու վերաբերյալ հարցում, վորին գյուղացին հանձնեց կոլտնտեսության և դրանից հետո միշտ չեր համարում, վոր կոլտնտեսային ձին իր ձին է, հարկավոր է նրան պահել այնպես, ինչպես և այն ժամանակ, յերբ այդ ձին նրա մասնավոր սեփականությունն էր: Մեր աշխատողները մի շարք դեպքերում չեյին հասկանում այդ և ձիու պահպանությանը վերաբերվում էյին չինովնիկաբար, անտարբեր: Համենայն դեպս, մենք այլ ևս դա չպիտի թույլ տանք»:

Դիմագրկությունը, պլուս ընկ. Մոլոտովի նկարագրած կոլտնտեսականի հոգեբանությունը—նպաս-

տավոր պայմաններ ստեղծեցին կուլակային ագիտացիայի համար և կոլտնտեսային ձին քայքայման հասցրին՝ վիժեցնելու համար ցանքի կամպանիան:

Յուրաքանչյուր ձի պահանջում է առանձին խնամք և մոտեցում: Զի կարելի մի արշինով չափել ամեն մի ձիու խնամքը: Հարկավոր է, վոր յուրաքանչյուր կոլտնտեսային ձիու առանձնահատկություններն ու պահանջները լավ ուսուփասերվեն: Մեկ ձին պահանջում է մեղմ վերաբերմունք, մյուսն առանց հատուկ հարկադրանքի մի քայլ ել չի անի. մյուս ձին կողքից լծված լինելով է լավ քայլում, մեկ ուրիշը—«մեջտեղից»: Կա ձի, վոր քայլելիս ազատ կերպով մեղում է, կա և ձի, վորը պահանջում է կանգ տանել և միայն այս դեպքում է միգում և այլն և այլն:

Դիմագրկության դեպքում ջանասեր կոլտնտեսականի աշխատանքներն իդուր են կորչում: Ի՞նչ պետք է անել, վոր վճռական հաջողությունների հասնենք քարշող ուժը ցանքի համար պատրաստելիս, ընդհանրապես ի՞նչ պիտի անել ձիու պահպանության և հետագա վերաբրտադրության համար: Հարկավոր է անհապաղ վերացնել դիմագրկությունը:

«Անպատասխանատվությունն ու դիմագրկությունը վերացնելու համար, յուրաքանչյուր չորս ձիու ամրացնել մեկ ստուգված, փորձված կոլտնտեսականի և նրա ցուցմունքով—մեկ ձեռքի տակ աշխատողի, այնպես, վոր դարձանային աշխատանքների ժամանակաշրջանում այդ քարշող ուժը, լծասարքը, տրանսպորտը և այլն ամրացված լինեն այդ կոլտնտեսականներին» (Յերկրգործկոմի և ՀԿ(Բ)Կ Յերկրկոմի 1933 թվի հունվարի 20-ի վորոշումից):

Այս ցուցմունքը պետք է իրագործել բոլոր կոլտնտեսություններում: Դործի այսպիսի ղրկածքի դեպքում, հեշտ կլինի հայտնաբերել կուլակային գոր-

վոր որական կեր պետք է տալ վոչ պակաս, քան յերեք—չորս անգամ: Պետք է նաև հիշել, վոր այդ չոր կերերը տալով, հարկավոր է ձիերին ջրել որական լեղիու անգամից վոչ պակաս: Ժամանակին (առավոտը և կեսորին) չջրելու պատճառով, ձիերի ախորժակը թուլանում է և նրանք լավ չեն ոգտագործում կոշտ կերը:

Հարկավոր է կուտնտեսությունների և բրիգադիրների ուշադրությունը դարձնել ծղոտի վորակի վրա: Նախքան ծղոտն իրրե կեր տալը, պետք է լավ նայել և մաքրել կեղտից, հողից, ծեռտից, կրծողներից և այլն: Ծղոտով և հաքղով կերակրելիս, հարկավոր է պարբերաբար մաքրել ձիու բերանը փառից, վորը խանգարում է նրան նորմալ կերպով գործածել կոշտ կերը:

Վերջան հնարավոր է, պետք է աշխատել կերը չտալ հատիկներով, այլ վերջիններս մաքրել այնպես, վոր ձիու որգանիղմը լավ մարսի այդ կերը:

Պարզ է, վոր ձիերին կարող են կանոնավոր կերակրել միայն հավատարիմ կուտնտեսականներն, ուստի հարկավոր է անպայման ստուգել ձիապանների կազմը:

Առաջարկել խորհանտեսությունների վերատեսուչներին և կուտնտեսությունների վարչություններին (այսպես և ասված Ժողկոմխորհի և ՀԿ (բ)Կ Կենտկոմի փետվարի 10-ի վորոշման մեջ) վոչ ուշ, քան մինչև մարտի մեկը ստուգել ձիապանների և յեզապահների ամբողջ կազմն, այնպես, վոր այդ կարևորագույն աշխատանքի համար նշանակվեն միայն ստուգված և բարեխիղճ կուտնտեսականները և խորհանտեսությունների բանվորները. սոցիալական ոտար բոլոր տարրերին անմիջապես փոխել ձիուն խնամելու աշխատաքից: Ընտրված ձիապանները մշտապես պիտի ամրացվեն ձիերին

—ամեն մեկը վոչ ավելի, քան 10 լծկան ձիու: Ձիերի ոգտագործման մեջ դիմազրկությունը վերացնելու համար, յուրաքանչյուր մեկ զույգ ձիուն ամրացնել մեկ կուտնտեսականի, վորը նրանց զրա պիտի աշխատի գյուղատնտեսական աշխատանքի ամբողջ ժամանակաշրջանում. նրա վրա, ինչպես և ձիապանի վրա պատասխանատվություն դնել իրեն հանձնված ձիերի պահպանության, իր ժամանակին կերակրելու և դեպի նրանց հոգատար վերաբերվելու համար:

Ձիու խնամքի, պահպանման և ամենօրյա ոգտագործման հարցերը պահանջում են խիստ ուշադիր հսկողություն: Ահա թե ինչու Ժողկոմխորհի և ՀԿ (բ)Կ Կենտկոմի վորոշումն ասում է:

«Պարտավորեցնել ՄՏԿ-ների և խորհանտեսությունների քաղաքականներին իրենց առասարկած ուսյուններում իրենց աշխատանքի կարևորագույն խնդիրը դարձնել ձիերի պատրաստությունը գարնանացանին, նրանց կանոնավոր ոգտագործումը, խնամքն ու պահպանումը»:

Քարշող ույժի նախապատրաստության հարցերի լուծմանը ներգրավվում են հսկողության և դատական որգանները, վորոնք պարտավոր են խիստ, պրոլետարական միջոցներ գործադրել զնասատուների, կուլակային տարրերի և այն կուտնտեսականների դեմ, վորոնք մոռանում են սոցիալիստական սեփականությունը պահպանելու իրենց պարտքը:

Այն անձանց, վորոնք մեղավոր են ձիու անկանոն, վայրենի ոգտագործման համար (չափից դուրս, ուժից վեր բեռնվածություն, ծեծ, քրոց, լծելու անկանոնություն և այլն) յենթարկել դատական խիստ պատասխանատվության: Իշխանություն տեղական որգանները և դատախազությունը չպետք է առանց քննության թողնեն լծկան անս-

սոճանների անկման և վոչ մի դեպք և այդպիսի դեպքերում մեղավորներին խիստ պատասխանատվության յենթարկեն» (ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարի 10-ի վորոշումը)։

Ահագինքանակությամբ հիվանդություններ, վորոնք դիմազրկության անբաժան ուղեկիցներն են, անպայման կվերացվեն՝ կորսնտեսականներին ձիերին ամբացնելու դեպքում։ Առողջ ձիու համար մղվող պայքարն ապահովում է ցանքի կամպանիայի հաջող անցկացումը։

## ՁԻՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ Ե ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք սխալ արած կլինեյինք, յեթե ձիու մասին խոսեյինք միայն իբրև գյուղատնտեսություն մեջ լծկան ուժի մասին, յեթե չհիշեյինք այն հսկայական դերը, վոր ունի ձին ուրիշ բնագավառներում։ Ընկ, Բուդյոնին ԽՍՀՄ Կենտգործկոմի յերրորդ նստաշրջանում բավական ընդարձակ ու պարզ պատմեց, թե ինչ դեր ունի ձին ներկայումս և ինչ դեր կունենա ապագայում հնարավոր ռազմական գործողությունների ժամանակ։ Ինչպես վարի ու ցանքի ժամանակ ձին լրացնում է տրակտորին, այնպես ել ռազմական գործողությունների ժամանակ ձին պետք է իր պատվավոր տեղն ունենա։

«Ձին դեռ յերկար կլինի մոտորի հավատարիմ ոգնականը։ Կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ, մարտական ձի տվեք Կարմիր բանակին» (Կարմիր բանակի XII-րդ տարեդարձի առթիվ ՀԿ(բ)Կ Կենտկոմի լողունգներից)։

Մինչդեռ կոլտնտեսությունները ջանք չեն թափում Կարմիր բանակին մարտունակ ձիեր մատակարարելու համար։ Անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր կոլտնտեսություն իր պրոլետարական պարտա-

կանությունը համարի ամեն տարի կարմիր հեծելազորը լրացնել անհրաժեշտ քանակությամբ առողջ և ուժեղ ձիերով։ Յեթե առաջ, ցարիզմի ժամանակներում, մենասնտես կազակն իր պարտականություններ համարում իր տղային զինել մարտական ձիով, ապա այժմ, յերբ մենք պայքարում ենք սոցիալիզմի համար, կոլտնտեսությունն ավելի ևս պետք է հոգ տանի կարմիր հեծելազորի ուժեղության և մարտունակության համար։

Հացամթերման կամպանիայի ընթացքում յեղած դասակարգային պայքարի դասերը պետք է հաշվի առնե յուրաքանչյուր կոմունիստ, կոմյերիտական ու կոլտնտեսական։ Կոլտնտեսային ձին, վորի համար դասակարգային պայքար է տեղի ունենում, պետք է դառնա բոլոր կազմակերպությունների ուշադրության կենտրոնը։

«Ձիերի ապահովման, նրանց վորակի բարելավման, նրանց անհրաժեշտ սննդի և աճման կազմակերպման գործին պետք է դարձնել նույնպիսի ուշադրություն, ինչպիսին վոր դարձվում է ցանքային կամպանիաներին» (ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թվի մայիսի 27-ի վորոշումից)։

Ձիու վերաբերմամբ կուսակցության ու կառավարության վորոշումները հասցնել ամեն մի կոլտնտեսականի—սա կուսկազմակերպությունների և կոմյերիտիության խնդիրն է։ Պայքարել յուրաքանչյուր ձիու, մասակի մեծացման, զուգավորման կամպանիայի համար—սա կոլտնտեսությունների, ՄՏԿ քաղբաժինների, կոմունիստների ու կոմյերիտականների գործողությունների ծրագիրն է։

Սերմահավաքը, տրակտորների վերանորոգումը և ամեն մի ձիու պատրաստումը—սրանք միևնույն շրջթայի ողակներն են, վորը պիտի վճռե 1933 թվականի գարնանացանի կամպանիայի հաջողությունը։

«Մերմֆոնդեր ստեղծելու հետ միասին, կոլտնտես-  
սություններում սկսել խտացած կերերի անձեռն-  
մխելի ֆոնդերի հատկացումը ցանքի կամպանիային»  
(Յերկրգործկոմի և ՀԿ(Բ)Կ Յերկրկոմի այս տարվա  
հունվարի 20-ի վորոշումից) — ահա ընթացիկ որերի  
ու ամսվա մարտական խնդիրը:

Ձիուն մարտականորեն պատրաստել վարի ու  
ցանքի համար, —

Վճռականապես վերացնել գիմազրկությունը ձիու  
խնամքի գործում, —

Ստեղծել կերի ֆոնդեր, —

Անխնա և ջախջախիչ պայքար մղել դասակարգա-  
յին թշնամու դեմ, —

Մերկացնել կորզիչներին, ծուլերին — դասակար-  
գային թշնամու գործակալներին, —

— Ահա թե ինչով մենք կապահովենք զարնանա-  
ցանի կամպանիայի հաջողությունը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                     |    |
|-------------------------------------------------------------------------------------|----|
| Պայքարել աղողջ ձիու համար, նշանակում և պայքա-<br>րել հաջող ցանքսի համար . . . . .   | 1  |
| Կոլտնտեսային ձին պետք և գտնվի վստահելի ձեռքե-<br>րում . . . . .                     | 11 |
| Դիմազրկության վերացումը կոլտնտեսային ձիու պահ-<br>պանության ճիշտ միջոցն է . . . . . | 19 |
| Ձին ամրապնդում և յերկրային պայքարում . . . . .                                      | 26 |



От. редактор  
А. Г. Авакьян  
Тех. редактор  
Г. М. Маркарян

Ac-VIII  
47-M

Сдано в наб. 20/II 1933 г.  
Сдано в печ. 23/II 1933 г.  
Об'ем 2<sup>1</sup>/<sub>2</sub> печ. листа  
Тираж 2000 экз.

«Ազգային գրադարան»



NL0289988

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.  
Цена 20 коп.

9078-

21.574



На армянском языке

ԿԱԲՈԼՈՎ Ս.

БЕРЕЧЬ КОЛХОЗНОГО КОНЯ

ИЗД-ВО „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱԴԱՆԺՈՒԹՅՈՒՆ

ՌՈՍՏՈՎ-ՆԱ, ՄՈՍԿՎԱԿԱՆ ՓՈՂ, 53

ԳՐԱԿԱՆՅՐԱՆ (ԿՆԻԳՈՅԵՆՏ)